

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀՈՂ, ԵՐԿԻՐ, ԵՐԿՐԱԳՈՒՆԳ (erets)
SPECIAL TOPIC: LAND, COUNTRY, EARTH (erets)

Բոլոր եբրայերեն արմատների պես, համատեքստը կարևոր է բնագրի հեղինակի կողմից նրանց մտադրված նշանակությունը որոշելու համար: Եբրայերեն արմատների սահմանափակ թվաքանակը (այսինքն՝ հնագույն Սեմական լեզուն) պատճառ է հանդիսանում, որ նրանցից յուրաքանչյուրը գործի տարբեր իմաստներով: Այս արմատը (BDB 75, KB 90) կարող է նշանակել՝

1. ամբողջ մոլորակը (չնայած որ հնում մարդիկ չէին պատկերացնում դրա չափերը և տեսքը: Սովորաբար այն կիրառվում էր «հայտնի աշխարհի» համար)
ա. Ծննդոց 1-2, 6-9, 10:32, 11:1,4,8,9, 14:19, 18:18,25, 22:18, և այլն
բ. Ելից 9:29, 19:5
գ. Սաղմոս 8:1,9, 24:1, 47:2,7, Երեմ. 25:26,29, 30
դ. Առակաց 8:31
ե. Եսայի 2:19, 21, 6:3, 11:4,9, 12, 12:5
2. երկիրը հակադրված երկնքի հետ՝
ա. Ծննդոց 1:2
բ. Ելից 20:4
գ. 2 Օրինաց 5:8, 30:19
դ. Եսայի 37:16
3. մոլորակի մարդ բնակիչների համար որպես փոխաբերություն՝
ա. Ծննդոց 6:11, 11:1
բ. 3 Թագավորաց 2:2, 10:24
գ. Հոբ 37:12
դ. Սաղմոս 33:8, 66:4
4. երկիր կամ տարածք
ա. Ծննդոց 10:10, 11, 11:28,31
բ. հատկապես՝ Իսրայելի համար (ՅԱՀՎԵԻՑ նվեր, Նա է այդ երկրի սեփականատերը)
5. հող, տես՝ Հեսու 7:21
6. հանդերձյալ աշխարհը՝
ա. Ելից 15:12
բ. Սաղմոս 22:29, 71:20, Երեմ. 17:13, Հովնան 2:6
7. նոր աշխարհը՝
ա. Եսայի 9:1-7, 65:17, 66:22
բ. տես՝ ՆԿ, Հռոմ. 8:19-22, Գաղ. 6:15, 2 Պետ. 3:13, Հայտն. 21:1,5

Հիշե՛ք, որ համատեքստը, համատեքստը, համատեքստը շատ կարևոր է: Հաճախ համագոր արմատները կարող են օգնել, բայց ոչ միշտ:

Գիրքը, որն ինձ օգնեց սկսել մտածել, թե ինչպես է այս աշխարհը գործածվում տարբեր համարներում, դա Բեռնարդ Նեմմի, *Գիտության և Մուրբ Գրքի շուրջ Քրիստոնեական տեսակետը* գիրքն է: Նա համոզեց ինձ, որ ջրհեղեղը եղել է տեղական բնույթի (այսինքն՝ Ծննդոց 6-9): Չգուշացե՛ք, ձեր աստվածաբանությունը անգլերեն բառերի սահմանումների վրա հիմնելուց: